



# Ա Ր Ո Շ

ՎԵՐԱԿՐՈՆԻ ՏԱՐԻ  
ԹԻ 1.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԱՍՏ 31.  
1871.

Ա Զ Գ Օ Յ Ի Ն . Բ Ա Ն Ս Ո Ս Ի Բ Ո Կ Ա Ն Ե Խ Գ Ր Ա Գ Ի Տ Ո Ս Ո Կ Ա Ն

Վ Ե Ր Ա Կ Ե Ն Դ Ա Ն Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Կեսարքը խորին խորհուրդ մ' է ,  
զը մբայն ճանաչել կարող ենք և ոչ  
ո ռհմանել : Կենաց յատկութիւն է , ա-  
ծումն , շարժումն և շարունակութիւն .  
իսկ կենաց մահն է՝ դադարումն : Վ յո-  
ւ ճանաչողութեամբ է , որ կարող ենք  
կենդանի էակները որոշել անկենդան-  
էակներէն : Վ այց կեանքը եւս բաղ-  
մահեամկ է և ամեն կեանք մի և նոյն  
կեանքը չէ : Վ յլ է բուռակն կեանքը .  
այլ է անապահն կեանքը և այլ է նար-  
իսին կեանքը : Բ այսը միայն մի տեսակ  
կեանք ունի . անապահնը՝ երկու տե-  
սակ , իսկ մարդը՝ քանի մի տեսակ :  
Վ արդը ունի անապահն կամ մարդ  
նուոր կեանք , որպէս եաւ մարմն ու-  
նի . ունի բանական կամ մասառ

կեանք , ըստ որում կը խօսի և կը  
մտածէ , ունի բարյամիան կեանք կամ  
սրաի կեանք , որպէս եաւ . կը պիրէ :  
Վ յս երեք տեսակ շարժողութիւն-  
քը և գործողութիւնքը միայն մար-  
դոյ մէջ միացած կը տեսնուին : Վ արմ-  
նայ կենդանութիւնը նիւթական ու-  
նունդն է . մարդ կենդանութիւնը  
մտածութիւնն է և ձշմարտութիւնը .  
իսկ սրաի կենդանութիւնն է՝ ձշմա-  
րտ մէրը : Վ արմինը կը մեռնի երբ  
նիւթական մնունդը կը ապահի . միա-  
քը կը մեռնի երբ տգիտութեան և  
մարդութեան մէջ կ'ընկղմի . իսկ սիրու-  
կը մեռնի երբ եստկան ինքնասիրու-  
թիւնը և առելութիւնը կը տիրեն :  
Վ այց որպէս եաւ մարդը բանական

և բարոյական էսէլ լինելով հանդերձ կենդամի մարդ է , ուրեմն մեռած են այն մարդիլը որոնք չեն խորհիր , ու բոնք չեն սիրեր , որոնք մօլորութեան մէջ են և որոնք կ'ատեն : Վայ ճշմարտութիւնը նեչպէս անհատներու համար է , նոյնագէս և ամբողջ ազգերու :

Առաջի երրոր ներկայ դարուս ճրշմարիս և կենդամի յաստաջողէ մասերը վշտակեանտառնիւն կ'աղստակէն , իրենց բուն նպատակն է մարդոց մտաւոր և բարոյական կենդամութիւնը , և այս կենդամական շունչը փշողը , այս մրտաւորապէս և բարոյապէս մեռածներու յարուցիչ ճայնն ու զօրութիւնը ճշմարիս դաստիարակութիւնն է : Եթէ դաստիարակութիւնը միտկող մանի է , եթէ մտաւոր կեանքը բարոյականէն կը զատէ , երբէք կարող չէ ամբողջ մարդը վերակենդանացը նել . Վասն զի մարդը ամբողջապէս վերակենդանացնելու համար կարեւոր է նոյն իսկ մարդոց մէջ գտնուած քանի մի կենաց առաւելութիւնը նկատողութեան առնուլ և ըստ այնմ դաստիարակէլ : Վասն զի աշխարհիս մէջ գտնուած կեանքերը իրարու չեն նմանիր և չեն հաւասարիր : Իռուսական կեանքը ստորագոյն է անանականէն , անանականը՝ մարդկայինէն , մարմնաւորը՝ մտաւորէն և մտաւորը՝ բարոյականէն : Վմենապարզ և ռամիկ մարդուն անդամ եթէ հարցընելու լինիս , աւելի կը փափաքի մտացի լինիլ . քանի թէ գեղեցիկ , աւելի բարի քան թէ մոտացի : Վայ մասին կարծեաց տարբերութիւնը կը կայ բովանդակակ մարդկութեան մէջ : Վիւթը և ձեւը միշտ ստորագոյն են գիտութենէն կամ ձանազողութենէն . իսկ զի տութիւնը երբէք կարող չէ հաւասարի սիրոյն : Վիւթը մորին ծառաւ յելով միայն գին ունի . իսկ գիտու-

թիւնը անարդ է , եթէ չէ յարեալ ՚ի սէր : Տունկը կեանք ունի , բայց ըստար , որովհետեւ դդալու համար չէ ստեղծուած , անասունը կեանք ունի . բայց չը խորհիր , որովհետեւ խորհելու համար չէ ստեղծուած . իսկ մարդը , որ ստեղծուած է սիրելու համար , մարդը որոց ճակատագիրը սէրն է , մարդը կարող է դդալ , կարող է խորհիլ , և եթէ չը սիրեր՝ մեռած է . որովհետեւ մարդոց վերին կեանքը՝ բարոյական կեանքն է և դաստիարակութեան բուն վերնակէտն եւս բարոյական կենաց կենդամութիւնն է :

Վրդարեւ՝ ճշմարտութիւնը մէծ բան է , բայց մեծ չ'է քան զսէր , և տուանց սիրոյ՝ ճշմարտութիւնն անօգուտ է : Վելի համարձակ ասենք , առանց սիրոյ՝ ճշմարտութիւն չը կայ . որովհետեւ չը կայ մրութիւն , չը կայ երջանկութիւն : Պէտք չէ զարմանալ այս մասին , վասն զի էականապէս առնելով ճշմարտութիւնը իրողութիւն մ' է և յարաբերութիւն , և ոչ թէ մասաց լոկ հայեցողութիւն կամ գաղափար : Ճշմարտութիւնը՝ դաղափարոց մէջ լինելէն առաջ իրաց մէջ : Եթ մի ճշմարիս է , երբ այն է ինչ որ է : խօսք մի ճշմարիս է , երբ զայն կը բացատրէ , ինչ որ պէտք էր բացատրէլ : Եթէ մարդը իրօք այն չէ : ինչ որ պէտք էր լինիլ , ինչ որ պէտք էր առնել : ոքան որ ճրշմարտութիւնը ճանաչէ , դարձեալ կարսղ չէ ճշմարտութեան մէջ լինիլ . Վյնակէս որ իսկապէս անհնարին է առնել : թէ այս ինչ մարդը սէր չունի , բայց ճշմարտութիւն ունի ; այն ինչ մարդը բարի չէ , բայց լուսաւոր է : Բարոյական կեանքը միշտ վերադայն է : մտաւոր կեանքէն : Վասն զի սէրը մարդկային կենաց նպատակն է . իսկ

Դիառլութիւնները՝ նոյն նպատակին համերը միջոցները. վասն զի մարդոց նպատակը միտթիւնն է, և միտթիւնը՝ սէրն է.

Երգ՝ նոքա ամենքը, որոնք ազգային վերակենդանութեան կը փափաքին, պարուաւոր են մատաւոր եւ բարյական դաստիարակութիւնը երարմէ բնաւ չք զատել, լոյսը իր չերմութենէն չք բաժնել և միշտ բարյականի առաւելը թիւնը ճանաչել, Եւանց բարյական տարեր, յորմէ գմբաղդաբար խիստ զուրկ են մեր գոյրոյները, մեր ընկերականութիր, մեր ժողովները, մեր բանախօսութիւնը, մեր գրաւածները, մեր յարաբերութիւնքը, մեր ազգակցութիւնը և մեր եղբայրութիւնը, անհնարին է ազգային ճշմարիտ վերակենդանութեան ակն ունիլ. Այն կենսարար զօրութիւնը, որ մեր ցրուած, ցամքած ու չորացած կմախքները պիտի միաւորէ, պիտի յօդէ և կենդանութիւն աայ, այն զօրութիւնը՝ դաստիարակութիւնն է. Այն փրկարար հիւթը, որով պիտի վերանորոշին, վերածնին և սնանին մեր միաքն ու սիրոր՝ ձշորդութիւնն է եւ սէրը. Այն անցավմէլի ոյժը, որ պիտի մեր Եղիքի անունը անմահ պահէ ազգաց գասակարգին մէջ, բարյական և մը տաւոր Ո էրովութառութիւնն է.

Այսոնը, սց վերակենդանութեան միմիթարիչ յուսով սոգեւողուած, մուտ կը գործէ ահա 1871 թուականին մէջ և անպայման պարտք կը համարի սցն վերակենդանութիւնը գլխաւոր նախատակ բռնելի իր մոտածութեանց և հըրատարակութեանց. վասն զի համոզուած է Այսոնը, որ ազգաց մահուան և կենդանութեան միակ կեդրոնն է ՄԻՏՔԸ և ՄԻՐԸ.

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Այսոնը, անցած տարուան վերմ վիճականութիւններէն շատ առաջ, արդէն գիտողութեան առած և պարզած է կաթողիկոսական խնդիրը 1869 թուականի Յունիսի ամեասի արին մէջ. Այսոնը, այժմ եւս նոր յօդուած մի ընդունելով նոյն խնդրոյ նկատմամբ, զոր պատմական հետազոտութեամբ շարագրած և զրկած է մեր համազգի բանագէտ Պ. Ա. Այվազեան, կը փութայ հրատարակել ՚ի վերծանութիւնի արդարախոհ ազգայնոյ,

Տեսութիւն. — Հակաթոռք. — Իրաթովկոսական անուն կրողք. — Տեղիք կաթողիկոսութեանց. — Արքիակալիիրք և Անխորութիւն. — Վայրէն քնտրութիւնք.

Եղիք. կաթողիկոսական աթոռոց խնդրոյն վրայ այնքան խօսուեցաւ, և այդ աթոռները այնքան գրին վերուցին, որ հիմա մեծ զգուշութիւն պէտք է ատիկա նորէն ձեռք առնելու, որ չըլայ թէ բարբովին քայլացուին

Եղիք կ'ուղեմք նորէն այս խընդրոյն վրայ գալ, բայց ոչ թէ Պիւթագորեանց մեր փաստաբանութեան և պատասխան կայան ընտրելով, ինչպէս շատերը մինչեւ հիմայ ըրած են, այլ այնպիսի փաստեր յառաջ բերելով որ ազգային պատմութեան և պատասխանեաց եկեղեցւոյ աւանդութեանց նկատմամբ հարազար ըլլալուն վրայ մեր ընդդիմարաններն իսկ ըսելիք մը ըունենան.

Այս և Եղիքամարայ կաթողիկոսութեանց մենք հակաթոռ ըսած չեմք, և չպիտի ըսեմք:

Ի՞նչու.

Վասն զի, հակաթոռներու ծնուն-